

Երեւանի մամուլի ակումբի՝ 2000թ. ֆինանսական գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 2000թ. հունվարի 1-ից մինչև 2000թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը, ներառյալ նաև 2000թ. հունվարի 1-ի մնացորդը՝ 18,618,691 դրամ 77 լումա, կազմել է 116,592,533 դրամ 97 լումա:

Դրանից. ԵՄԱ անդամների անդամավճարներ՝ 163,000 դրամ, դրամաշնորհներ Բաց հասարակության ինստիտուտի ԶԼՄ-ների ցանցային ծրագրի՝ 46,177,126 դրամ 80 լումա, դրամաշնորհ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակից՝ 43,767,332 դրամ, որից անմիջականորեն մատակարարներին է փոխանցվել 1,659,507 դրամ, դրամաշնորհ «Եվրասիա» հիմնադրամի Հարավային Կովկասի համագործակցության ծրագրի՝ 3,914,478 դրամ 10 լումա, դրամաշնորհ Բաց հասարակության ինստիտուտի (Արևելք-Արևելք ծրագիր)՝ 2,831,826 դրամ, փոխարժեքային դրական տարբերությունը՝ 695,643 դրամ 70 լումա եւ 424,437 դրամ 60 լումա ստացվել է իբրև բանկային տոկոս:

Հաշվետու ժամանակահատվածում ծախսվել է **61,746,805** դրամ 35 լումա, որից.

1. Աշխատավարձի վճարման համար ծախսվել է 25,996,761 դրամ 35 լումա:
2. Աշխատավարձից եկամտահարկը եւ կենսաթոշակային հիմնադրամ մուծումները կազմել են 13,367,029 դրամ 90 լումա:
3. Հիմնական միջոցների ձեռք բերման համար ծախսվել է 2,865,753 դրամ 80 լումա:
4. Բանկային ծառայությունների համար՝ 87,366 դրամ 90 լումա:
5. Փոխարժեք եւ արագամաշ իրերի ձեռք բերման ծախսերը կազմել են 85,414 դրամ 60 լումա:
6. Կապի ծախսերը կազմել են 3,254,036 դրամ 70 լումա:
7. Գրասենյակային, գրենական պիտույքների ծախսերը կազմել են 8,858,020 դրամ 90 լումա:
8. Տպարանային ծախսերը կազմել են 5,121,600 դրամ:
9. Մամուլի ասուլիսների, սեմինարների եւ կլոր սեղանների կազմակերպման ծախսերը կազմել են 743,350 դրամ:
10. Գործուղման ծախսերը (ներառյալ հարկերը) կազմել են 3,445,850 դրամ 70 լումա:
11. Կազմակերպության ծառայությունների ծախսերը կազմել են 685,624 դրամ 70 լումա:
12. Գրքերի ձեռք բերման համար ծախսերը կազմել են 843,618 դրամ:
13. Ապրանքի ձեռք բերման համար կազմակերպություններին ԱԱՀ վճարման ծախսերը կազմել են 288,944 դրամ:
14. Կոմունալ ծախսերը կազմել են 3,800,847 դրամ 80 լումա:
15. Չծախսված գումարի վերադարձը Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան գրասենյակին կազմել է 3,675,004 դրամ:
16. Չփաստաթղթավորված (ակտով) ծախսերի դիմաց 15% եկամտահարկը կազմել է 19,800 դրամ:

Շնորհատու կազմակերպությունների պահանջներին համապատասխան ժամանակին նրանց է ներկայացվել առանձին ծրագրերի եւ ծախսվող գումարների

ամբողջ հաշվետվությունը:

ԵՄԱ կանոնադրության համաձայն բոլոր ծախսերը համաձայնեցվել են ԵՄԱ վարչության հետ:

Բոլոր եկամուտները եւ ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են Երեւանի մամուլի ակումբի հաշվապահությունում:

2001թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է **54,845,728** դրամ 62 լումա:

Սույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել: